

## Շրջանառության հարկով հարկման համակարգ

### 1.1 Ընդհանուր Նկարագիր

Շրջանառության հարկը պետական բյուջե վճարվող՝ ԱԱՀ-ին և/կամ շահութահարկին փոխարինող պետական հարկ է: Շրջանառության հարկով հարկման հիմք է ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման և/կամ ծառայությունների մատուցուման գործարքների շրջանառությունը:

Ռեզիդենտ առևտրային կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը և նոտարը կարող են համարվել շրջանառության հարկ վճարող, եթե.

1) նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով շրջանառությունը չի գերազանցել 115 միլիոն դրամը՝ բացառությամբ հանրային սննդի ոլորտում գործունեություն ծավալող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի<sup>1</sup>

2) չեն գործում, որպես բանկեր, վարկային կազմակերպություններ, ապահովագրական ընկերություններ, ներդրումային ընկերություններ, արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցներ, գրավատներ, արտարժույթի առք և վաճառք, արտարժույթի դիլերային-բրոկերային առք ու վաճառքի գործունեություն իրականացնողներ, ներդրումային ֆոնդեր, ֆոնդերի կառավարիչներ, վճարահաշվարկային կազմակերպություններ, խաղատներ, շահումով խաղերի կազմակերպման գործունեություն իրականացնողներ, առևիտորական կազմակերպություններ

3) չեն կատարել հարկային տարվա ընթացքում ՀԴՄ շահագործման կանոնների երրորդ խախտում

---

<sup>1</sup> Եթե [հանրային սննդի](#) ոլորտում գործունեություն ծավալող կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր եք կարող եք համարվել [շրջանառության հարկ վճարող](#), [նույնիսկ եթե գերազանցել եք 115 միլիոն դրամ շեմը](#)

4) չեն հանդիսանում համատեղ գործունեության պայմանագրի, ապրանքների մատակարարման՝ կոմիսիայի կամ ապրանքների մատակարարման՝ գործակալի անունից հանդես գալու պայման նախատեսող գործակալության պայմանագրի կողմ<sup>2</sup>

5) կազմակերպության կանոնադրական կապիտալի 20% և ավելի բաժնեմասը չի պատկանում այլ ընկերությանը, անհատ ձեռնարկատիրոջը կամ նոտարին<sup>3</sup>

6) կազմակերպության կանոնադրական կապիտալի 20% և ավելի բաժնեմասը չի պատկանում ֆիզիկական անձին, որին միաժամանակ պատկանում է այլ ընկերության կանոնադրական կապիտալի 20% և ավելի բաժնեմասը<sup>4</sup>

### 1.2 Հարկային պարտավորություններ

Շրջանառության հարկի գումարը հաշվարկվում է, որպես տոկոս տարեկան շրջանառությունից՝ ելնելով ստորև բերված աղյուսակի դրույքաչափերից.

Գործունեության տեսակ	Դրույքաչափ
1.Առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից ստացվող եկամուտներ, բացառությամբ Կառավարության սահմանած ցանկում ներառված երկրորդային հումքի առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից, անշարժ գույքի օտարումից ստացվող եկամուտների	5%

<sup>2</sup> Օրինակ, ենթադրենք Ա ընկերությունը Բ ընկերության հետ կնքել է համատեղ գործունեության պայմանագիր, ըստ որի Ա ընկերությունը զբաղվում է թեյի արտադրությամբ, իսկ Բ ընկերությունը զբաղվում է թեյի փաթեթավորվմամբ, բրենդինգով և վաճառքով: Այս պարագայում Ա և Բ ընկերությունները չեն կարող համարվել շրջանառության հարկ վճարող:

<sup>3</sup> Ենթադրենք դուք գրանցել եք Կարեն Վարդանյան ԱԶ, միևնույն պահին Ձեր ընկերների հետ բացել եք Կաթիլ ՍՊԸ, որտեղ ունեք ընկերության 30%: Այս պարագայում ո՛չ Կարեն Վարդանյան ԱԶ-ն, ոչ Կաթիլ ՍՊԸ-ն չեն կարող դիմել շրջանառության հարկի հարկման համակարգի ներքո աշխատելու համար: Կարևոր է նշել, որ եթե Կարեն Վարդանյան ԱԶ-ն հարկային մարմին ներկայացնի գործունեությունը դադարեցնելու մասին հայտարարություն, ապա Կաթիլ ՍՊԸ-ն կարող է դիմել շրջանառության հարկի հարկման համակարգի ներքո աշխատելու համար հայտարարության ներկայացման հաջորդ օրվանից: Նույնը սկզբունքը կկիրառվի Կարեն Վարդանյան ԱԶ-ի հանդեպ, Կաթիլ ՍՊԸ-ի գործունեության դադարեցման դեպքում:

<sup>4</sup> Ենթադրենք Գոռ Արամյանը ունի 30% բաժնեմաս Շինտեկ ընկերությունում և 40% բաժնեմաս ՊռոնԼայֆ ընկերությունում, ապա այս դեպքում ո՛չ Շինտեկը, ո՛չ ՊռոնԼայֆը չեն կարող դիմել շրջանառության հարկի հարկման համակարգով աշխատելու համար: Վերջինս հնարավոր կլինի միայն եթե ընկերություններից որևէ մեկը հարկային մարմին ներկայացնի գործունեությունը դադարեցնելու մասին հայտարարություն:

2.Կառավարության սահմանած ցանկում ներառված երկրորդային հոլմքի <sup>5</sup> առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից ստացվող եկամուտներ	1.5%
3.Խմբագրությունների կողմից թերթերի օտարումից եկամուտներ	1.5%
4.Արտադրական գործունեությունից ստացվող եկամուտներ	3.5%
5.Վարձակալական վճար, տոկոս, ռոյալթի, անշարժ գույքի օտարումից ստացվող եկամուտներ	10%
6.Նոտարական գործունեությունից ստացվող եկամուտներ	10%
7.Վիճակախաղերի կազմակերպման գործունեությունից ստացվող եկամուտներ	25%
8.Հանրային սննդի ոլորտում <sup>6</sup> իրականացվող գործունեությունից ստացվող եկամուտներ	6%
9.Հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող շրջանառության հարկ վճարողների կողմից ՀՀում կիրառվող՝ տնտեսական դասակարգչի «Հանրային սննդի կազմակերպում» հատվածում չներառվող՝ այլ ակտիվների օտարումից, ինչպես նաև այլ գործունեությունից ստացվող եկամուտներ <sup>7</sup>	20%
10.Այլ գործունեությունից կամ այլ ակտիվների օտարումից ստացվող եկամուտներ	5%

Եթե պատրաստվում եք զբաղվել առևտրային (առք և վաճառք) կամ հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությամբ (աղյուսակի 1ին, 8րդ կետ), ապա ձեր [շրջանառության հարկի գումարը կարող է նվազեցվել:](#)

<sup>5</sup> Թղթի և սովորաբար թափոններ, գունավոր ու սև մետաղների ջարդոն և թափոններ, պոլիմերային նյութերի թափոններ, ապակու և ապակյա իրերի ջարդոն ու թափոններ, այդ թվում՝ գործածության մեջ եղած ապակյա տարաներ, տեքստիլ թափոններ, հանքային և սինթետիկ յուղերի թափոններ, ռետուրսը սպառած էլեկտրական մարտկոցներ, էլեկտրատեխնիկա և էլեկտրոնային սարքավորումների ու դրանց մասերի ջարդոն և թափոններ, շինարարական թափոններ, փայտանյութի թափոններ, ռետինե թափոններ

<sup>6</sup> Ֆուրշետային ծառայությունները չեն մտնում հանրային սննդի ոլորտի մեջ: Ֆուրշետային ծառայությունները մտնում են «Այլ ծառայություններ»-ի մեջ և հարկվում 5% դրույքաչափով:

<sup>7</sup> Օրինակ, որպես ՍՊԸ վարձակալել եք տարածք, որի մի մասում վաճառում եք ուտեստներ, իսկ մյուս մասում՝ հուշանվերներ: Հուշանվերների վաճառքի գծով պետք է առանձին հաշվառում անեք և գործող դրույքաչափը կլինի 20%, սննդի վաճառքի գծով առանձին հաշվառում, որտեղ դրույքաչափը կլինի 6%:

## Նվազեցումներ. Առևտրային (առք և վաճառք) գործունեություն

Անմիջական վաճառքի նպատակով ՀՀ-ում ձեռք բերված ապրանքների ծախսերի, ինչպես նաև ՀՀ ներմուծված ապրանքների մասով ծախսերի (ներմուծման մաքսային հայտարարագրում նշված ապրանքի մաքսային արժեք + մաքսատուրք + ԱԱՀ) հանրագումարի 4%-ը կարող է նվազեցվել շրջանառության հարկի գումարից: Շրջանառության հարկի գումարը նվազեցումից հետո սակայն չի կարող լինել շրջանառության 1.5%ից պակաս: Եթե նվազեցումներից հետո շրջանառության հարկի գումարը կազմում է շրջանառության 1.5%ից պակաս գումար, ապա նվազեցումը արվում է այն չափով, որ շրջանառության հարկի գումարը կազմի շրջանառության 1.5%-ը, իսկ տարբերությունը կարող է փոխանցվել մյուս եռամսյակ: Հասկանանք, թե ոնց է աշխատում նվազեցման մեխանիզմը ստորև բերված օրինակներով:

**Օրինակ 1.** Դուք զբաղվում եք տեղական և չինական արտադրության խաղալիքների առևտրով (առք և վաճառքով): Եռամսյակի ընթացքում տեղական շուկայից **վերավաճառքի նպատակով** գնել եք **2.000.000 դրամի**, իսկ Չինաստանից **ներմուծել եք 6.000.000 դրամի** (=մաքսային արժեք + մաքսատուրք + ԱԱՀ) համարժեք խաղալիքներ: Չինաստան մեկնելու և կացության ծախսերը կազմել են **650.000 դրամ**: Եռամսյակի **շրջանառությունը** (խաղալիքների իրացումից ստացված գումարը) կազմել է **10.000.000 դրամ**: Այսպիսով, հաշվի առնելով Ձեր գործունեության համար նախատեսված 5% շրջանառության հարկի դրույքաչափը, **շրջանառության հարկի վճարման ենթակա գումարը** կկազմի **500.000 դրամ** ( $0.05 \cdot 10.000.000$ ): **500.000 դրամ** շրջանառության հարկի գումարը **հնարավոր է նվազեցնել 6.000.000** (ՀՀ ներմուծված ապրանքների մասով ծախսեր) + **2.000.000** (ՀՀ-ում ձեռք բերված ապրանքների ծախսեր) 4%-ով =  $(2.000.000 + 6.000.000)^8 \cdot 0.04 = 320.000$  **դրամով**: Վճարման ենթակա **շրջանառության հարկի վերջնական գումարը** կկազմի  $500.000 - 320.000 = 180.000$  **դրամ** ( $> 150.000 = 0.015 \cdot 10.000.000$ ):

**Օրինակ 2.** Դուք զբաղվում եք տնտեսական ապրանքների առք և վաճառքով: Գերմանիայից **ներմուծել եք 9.250.000 դրամի** (=մաքսային արժեք + մաքսատուրք + ԱԱՀ) համարժեք ապրանք: Եռամսյակի **շրջանառությունը** (ապրանքների իրացումից ստացված գումարը)

<sup>8</sup> Ծախսերի հանրագումարը չի ներառում Չինաստան մեկնելու և կացության ծախսերը, քանի որ վերջինս անմիջական վաճառքի նպատակով ՀՀ ներմուծված ապրանքների մասով ծախս չէ

կազմել է 10.000.000 դրամ: Գերմանիա մեկնելու և կացության ծախսերը կազմել են 450.000 դրամ: Այսպիսով, հաշվի առնելով Ձեր գործունեության համար նախատեսված 5% շրջանառության հարկի դրույքաչափը, շրջանառության հարկի վճարման ենթակա գումարը կկազմի 500.000 դրամ ( $0.05 \cdot 10.000.000$ ): 500.000 դրամ շրջանառության հարկի գումարը հնարավոր է նվազեցնել 9.250.000 դրամի<sup>9</sup> (ՀՀ ներմուծված ապրանքների մասով ծախսեր) 4%-ով =  $9.250.000 \cdot 0.04 = 370.000$  դրամով: Նվազեցումից հետո վճարման ենթակա շրջանառության հարկի գումարը պետք է կազմեր  $500.000 - 370.000 = 130.000$  դրամ, բայց քանի որ այս գումարը 150.000 դրամից (շրջանառության՝ 10.000.000 դրամի, 1.5%ը) փոքր է, վճարման ենթակա շրջանառության հարկի վերջնական գումարը կկազմի 150.000 դրամ: Միևնույն պահին մյուս եռամսյակում վճարման ենթակա շրջանառության հարկի գումարը կնվազեցվի նախորդ եռամսյակում գրանցված 20.000 դրամ տարբերությունով (=150.000-130.000):

#### Նվազեցումներ. Հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեություն

Հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության հետ կապված ծախսերի հանրագումարի 3%-ը կարող է նվազեցվել շրջանառության հարկի գումարից: Նման ծախսերի մեջ են մտնում խոհարարական արտադրանքի հումքի (գյուղմթերք, սննդի հավելումներ և այլն) ձեռքբերման ծախսեր, աշխատողների վարձավճարներ, ռեստորանային սրահի վարձակալություն, սեփական կամ վարձակալված ռեստորանային սրահի կոմունալ վճարներ, վարկի տոկոսադրույքի գումար, և այլն:

Նվազեցման ենթակա ծախսերի մեջ չեն ներառվում հիմնական միջոցների<sup>10</sup> ձեռք բերելու կամ կառուցելու ծախսերը (օրինակ, ռեստորանային տարածքի, սեղան/աթոռ, սպասքի ձեռքբերում և այլն), հիմնական միջոցների վրա կատարվող կապիտալ և ընթացիկ ծախսերը (օրինակ, վարձակալված կամ գնված տարածքի նորոգման ծախսեր), հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն մասհանումներ, խոհարարական արտադրանք չհանդիսացող այլ ակտիվների օտարման դեպքում՝ դրանք ձեռք բերելու ծախսերը (օրինակ, եթե որոշել եք թարմացնել խոհարարական սարքավորումներ և

<sup>9</sup> Ծախսերի հանրագումարը չի ներառում Գերմանիա մեկնելու և կացության ծախսերը, քանի որ վերջինս անմիջական վաճառքի նպատակով ՀՀ ներմուծված ապրանքների մասով ծախս չէ

<sup>10</sup> Հիմնական միջոցները նյութական ակտիվներ են, որոնք առկա են ապրանքների կամ ծառայությունների արտադրության (մատուցման) կամ մատակարարման, այլ կողմերին վարձակալության տալու, ակնկալվում է օգտագործել ավելի քան մեկ տարվա ընթացքում և որի արժեքը գերազանցում է 25000 դրամ

վաճառում եք հինը): Շրջանառության հարկի գումարը նվազեցումից հետո սակայն չի կարող լինել շրջանառության 4%-ից պակաս: Եթե նվազեցումներից հետո շրջանառության հարկի գումարը կազմում է շրջառության 4%-ից պակաս գումար, ապա նվազեցումը արվում է այն չափով, որ շրջանառության հարկի վերջնական գումարը կազմի շրջանառության 4%-ը: Հասկանանք, թե ոնց է աշխատում նվազեցման մեխանիզմը ստորև բերված օրինակներով:

**Օրինակ.** Դուք ունեք ռեստորանային բիզնես: **Գնել եք** ռեստորանային սրահը **30.000.000 դրամով**, իսկ սրահի **վերանորոգման ծախսերը** արժեցել են **4.000.000 դրամ**: Եռամսյակի ընթացքում **գնել եք 3.000.000 դրամի** համարժեք մրգեր, բանջարեղեն, միս, ձեթ: **Սպասքի ձեռքբերումը** եռամսյակի ընթացքում արժեցել է **300.000 դրամ**: **Իսկ նոր գնված խոհանոցային գազօջախը՝ 60.000 դրամ**: **Կոմունալ վճարները** եռամսյակի ընթացքում կազմել են **120.000 դրամ**: Եռամսյակի **շրջանառությունը** (խոհարարական արտադրանքի իրացումից ստացված հասույթը) կազմել է **8.000.000 դրամ**: Այսպիսով, հաշվի առնելով Ձեր գործունեության համար նախատեսված 6% շրջանառության հարկի դրույքաչափը, **շրջանառության հարկի վճարման ենթակա գումարը** կկազմի **480.000 դրամ** ( $0.06 \cdot 8.000.000$ ): 480.000 դրամ շրջանառության հարկի գումարը հնարավոր է **նվազեցնել** ( $3.000.000 + 120.000$ ) **դրամի**<sup>11</sup>  $3\%$ -ով =  $3.120.000 \cdot 0.03 = 93.600$  **դրամով**: Վճարման ենթակա շրջանառության հարկի վերջնական գումարը կկազմի **480.000 - 93.600 = 386.400 դրամ** ( $> 0.04 \cdot 8.000.000 = 320.000$  **դրամ**):

---

<sup>11</sup> Ծախսերի հանրագումարը չի ներառում սրահի ձեռքբերման (հիմնական միջոցի ձեռքբերում) և վերանորոգման ծախսերը (հիմնական միջոցների վրա կատարվող կապիտալ, գազօջախի արժեքը, ինչպես նաև սպասքի ձեռքբերումը, քանի որ վերջինիս արժեքը գերազանցում է 25.000 դրամը՝ ըստ այդմ համարվելով հիմնական միջոց):

Բոլոր մյուս հարկերի և վճարների վերաբերյալ մանրամասները տրված են ստորև բերված աղյուսակում:

	Ակցիզային հարկ	Շահութահարկ	Եկամտային հարկ <sup>12</sup>	Շրջանառության հարկ
ՍՊԸ/ ՓԲԸ/ ԲԲԸ	Ակցիզային հարկով հարկման ենթակա կլինեք, եթե զբաղվում եք էթիլային սպիրտի (բացառությամբ կոնյակի սպիրտի), սպիրտային խմիչքների, գարեջրի, գինու, ծխախոտի (այդ թվում՝ ծխախոտի արդյունաբերական և փոխարինիչները, սիգարները, սիգարեղաները), քսայուղի, բենզինի, դիզելային վառելիքի, հում նավթի, նավթամթերքների, նավթային գազերի, սեղմված բնական գազի արտադրությամբ և/կամ ներմուծումով: Հարկի չափերը սահմանվում է ՀՀ հարկային օրենսգրքի 88-րդ հոդվածով՝ <a href="https://bit.ly/38Y2845">https://bit.ly/38Y2845</a>	Կիրառելի չէ	ՍՊԸ/ՓԲԸ/ԲԲԸ պարագայում 5% շահաբաժնի հարկում	Վճարվում է վերը բերված հիմունքներով
ԱԶ		Իր գծով ԱԶ-ն վճարում է ամսական 5000 դրամ:	ԱԶ կամ ՍՊԸ/ՓԲԸ/ԲԲԸ վարձու աշխատող (այդ թվում անհատական ձեռնարկատերն անձամբ, եթե վերջինս գրանցված աշխատող է և ստանում է աշխատավարձ) ունենալու դեպքում՝ ամսական աշխատավարձի 21 %	Վճարվում է վերը բերված հիմունքներով

<sup>12</sup> Եկամտային հարկը վերաբերում է ոչ թե բիզնեսին, այլ այդ բիզնեսում ներգրավված աշխատողներին: Տնտեսվարողը, որպես հարկային գործակալ, պարտավոր է հաշվարկել և վճարել իր աշխատողների եկամտային հարկը:

	Սոցիալական/կուտակային վճար	Դրոշմանիշային վճար/բանակ
ՍՊԸ/ՓԲԸ/ԲԲԸ	Վարձու աշխատողի <sup>13</sup> ՝ < 500.000 դրամ աշխատվարձի դեպքում՝ ամսական 4.5% 500.000-1.020.000 դրամ դեպքում՝ ամսական աշխատավարձի 10%-ի ու 32.500 դրամի տարբերություն, >1.020.000 դրամ աշխատավարձի դեպքում՝ 69500 դրամ	Ամեն վարձու աշխատողի համար կախված աշխատավարձից ամսական՝ <100.000 դրամ աշխատվարձի դեպքում՝ 1500 դրամ, 100.001-200.000 դրամ աշխատվարձի դեպքում՝ 3000 դրամ 200.001-500.000 դրամ աշխատավարձի դեպքում՝ 5500 դրամ 500.001-1.000.000 դրամ աշխատվարձի դեպքում՝ 8500 դրամ >1.000.001 դրամ աշխատավարձի դեպքում՝ 15 000 դրամ
ԱԶ	Շրջանառության հարկի հարկման համակարգի ներքո գործունեություն ծավալող ԱԶ-ն իր գծով վճարում է ամսական 5000 դրամ կուտակային վճար <sup>13</sup> : Վարձու աշխատող ունենալու դեպքում աշխատողի հաշվով <sup>13</sup> < 500.000 դրամ աշխատվարձի դեպքում՝ ամսական աշխատավարձի 4.5% 500.000-1.020.000 դրամ դեպքում՝ ամսական աշխատավարձի 10%-ի ու 32.500 դրամի տարբերություն, >1.020.000 դրամ աշխատավարձի դեպքում՝ 69.500 դրամ	Շրջանառության հարկի հարկման համակարգի ներքո գործունեություն ծավալող ԱԶ-ն իր գծով վճարում է տարեկան 18.000 դրամ միանվագ: ունենալու դեպքում աշխատողի հաշվով՝ <100.000 դրամ աշխատվարձի դեպքում՝ 1500 դրամ, 100.001-200.000 դրամ աշխատվարձի դեպքում՝ 3000 դրամ 200.001-500.000 դրամ աշխատվարձի դեպքում՝ 5500 դրամ 500.001-1.000.000 դրամ աշխատվարձի դեպքում՝ 8500 դրամ >1.000.001 դրամ աշխատավարձի դեպքում՝ 15.000 դրամ

### 1.3 Հարկային ռեժիմի տակ աշխատելու համար դիմումի ներկայացման կարգ

Շրջանառության հարկ վճարող համարվելու համար անհրաժեշտ է <https://file-online.taxservice.am> էլեկտրոնային համակարգի միջոցով լրացնել և հանձնել Ձեր «Անձնական էջ» բաժնի «Հաշվետվություններ» ենթաբաժնի «201. Շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ» հայտարարությունը: Վերջինս հարկավոր է անել գրանցումից հետո 20 օրվա ընթացքում: Եթե գրանցումից անցել է ավելին քան 20 օր, ապա տվյալ տարվա համար շրջանառության հարկի համակարգում հայտնվել հնարավոր չի լինի:

<sup>13</sup> Եթե ծնվել է 1974 թվականի հունվարի 1-ից հետո: Մինչև 1974 թ. հունվարի 1-ը ծնված լինելու դեպքում որևէ կուտակային վճար չի կատարվում:



Հայտարարությունը ներկայացնել պետք է նաև յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից փետրվարի 20-ը ընկած ժամանակահատվածում՝ անկախ նախկինում այդ համակարգում հաշվառված լինելու փաստից:

1.4 Հարկային հաշվետվությունների ներկայացման և հարկային պարտավորությունների կատարման ժամկետներ

Որպես շրջանառության հարկ վճարող Ձեզ անհրաժեշտ է հանձնել ՊԵԿ-ի Էլեկտրոնային համակարգում որոշ հաշվետվություններ, որոնք առկա են <https://file-online.taxservice.am> համակարգի Ձեր անձնական Էջի «Հաշվետվություններ» բաժնում:

Անվանում	Վերջնաժամկետ
232. Շրջանառության հարկի հաշվարկ <sup>14</sup>	Մինչև յուրաքանչյուր հաշվետու եռամսյակի հաջորդող ամսվա 20-ը
189. Եկամտային հարկի հաշվարկ	Մինչև յուրաքանչյուր հաշվետու ամսվա 20-ը
ԱԶ լինելու դեպքում 240. Հաշվարկ՝ ռեզիդենտ շահութահարկ վճարողի և մշտական հաստատության միջոցով ՀՀ-ում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի <sup>15</sup>	Մինչև հարկային տարվա հաջորդող տարվա ապրիլի 20-ը
ԱԶ լինելու դեպքում 244. Հաշվարկ՝ անհատ ձեռնատիրոջ և նոտարի սոցիալական վճարի <sup>16</sup>	Մինչև հարկային տարվա հաջորդող տարվա ապրիլի 20-ը <sup>17</sup>

<sup>14</sup> Սույն հաշվետվության երկրորդ մասում պետք է լրացնեք Ձեր գործունեության տեսակի կոդը, բաժինը, հատվածը, խումբը, դասը և ենթադասը: Վերջինս հասկանալու համար անհրաժեշտ է բեռնել հետևյալ փաստաթուղթը՝ <http://www.arlis.am/Annexes/4/GT30.1-13page1730-2124ink1392.doc>

<sup>15</sup> 4րդ տողում անհրաժեշտ է նշել ԱԶ, 5րդ տողում՝ հաշվետու տարին: Բոլոր մյուս տողերից անհրաժեշտ է լրացնել միայն 107րդ տողը «107. Շրջանառության հարկով և/կամ արտոնագրային հարկով հարկվող գործունեության տեսակներով զբաղված ԱԶ շահութահարկի գումար» և ընտրել հնարավոր տարբերակներից 60.000 դրամը:

<sup>16</sup> 5րդ տողում անհրաժեշտ է նշել հաշվետու տարին: Բոլոր մյուս տողերից անհրաժեշտ է լրացնել միայն 8րդ տողը «Սոցիալական վճար արտոնագրային հարկի և (կամ) շրջանառության հարկի համակարգում իրականացվող գործունեության մասով» և ընտրել 60.000 դրամ հնարավոր տարբերակներից:

<sup>17</sup> Սոցիալական վճարը կարող էք վճարել նաև ամսական կտրվածքով մինչև յուրաքանչյուր հաշվետու ամսվա հաջորդող ամսվա 20-ը: Այս պարագայում հաշվետվությունը լրացնելիս 8-րդ տողում պետք է ընտրել հնարավոր տարբերակներից 5.000 դրամը:

Եթե ակցիզային հարկ վճարող<sup>18</sup> էք, ապա նաև մինչև յուրաքանչյուր հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 20-ը պետք է հանձնեք «203. Ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի միասնական հաշվարկ» հաշվետվությունը՝ լրացնելով միայն հաշվետվության բաժին 2-ը:

Հարկային պարտավորությունների և վճարների մարումը պետք է իրականացվի հետևյալ ժամանակային գրաֆիկով.

Անվանում	Վերջնաժամկետ	Հաշվեհամար
Եկամտային հարկ	Մինչև յուրաքանչյուր հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 20-ը	900008000490
Կենսաթոշակային կուտակային վճար		
ԱՁի դեպքում իր գծով տարեկան կենսաթոշակային կուտակային վճար	Մինչև հարկային տարվա հաջորդող տարվա ապրիլի 20-ը	
ԱՁի դեպքում իր գծով շահութահարկի վճար		
Վարձու աշխատող ունենալու դեպքում դրոշմանիշային վճար	Մինչև յուրաքանչյուր հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 20-ը	9000050011186
ԱՁ լինելու դեպքում նաև տարեկան 12.000 դրամ դրոշմանիշային վճար:	Մինչև հարկային տարվա հաջորդող տարվա փետրվարի 1-ը	

Ակցիզային հարկ վճարող լինելու դեպքում, ակցիզային հարկի գումարների վճարումը իրականացվում է ըստ գործարքի տեսակի և ապրանքատեսակի՝

<sup>18</sup> Ակցիզային հարկով հարկման ենթակա կլինեք, եթե զբաղվում եք Եթիլային սպիրտի (բացառությամբ կոնյակի սպիրտի), սպիրտային խմիչքների, գարեջրի, գինու, ծխախոտի (այդ թվում՝ ծխախոտի արդյունաբերական փոխարինիչները, սիգարները, սիգարելաները), քսայուղի, բենզինի, դիզելային վառելիքի, հում նավթի, նավթամթերքների, նավթային գազերի, սեղմված բնական գազի արտադրությամբ և/կամ ներմուծումով: Հարկի չափերը սահմանվում է ՀՀ հարկային օրենսգրքի 88-րդ հոդվածով՝ <https://bit.ly/38Y2845>

Հարկման բազա	Հաշվեհամար
ՀՀ-ում արտադրվող գարեջուր	900005003026
ՀՀ-ում արտադրվող հաղողի և այլ գինիներ	900005003166
ՀՀ-ում արտադրվող փրփրուն գինիներ և գինեկոթեր	900005003174
ՀՀ-ում արտադրվող վերմուտ և խաղողի այլ գինիներ, որոնք պարունակում են բուսական և արոմատիկ էքստրատներ	900005003182
ՀՀ-ում արտադրվող դ խմորման ենթարկվող այլ ըմպելիքներ (խնձորի սիդր, պերրու (տանձի սիդր), մեղրաըմպելիք)	900005003190
ՀՀ-ում արտադրվող էթիլենային սպիրտ	900005003208
ՀՀ-ում արտադրվող սպիրտային խմիչքներ	900005003216
ՀՀ-ում արտադրվող խաղողի գինու թորումից ստացվող թրմեր, կոնյակ	900005003224
ՀՀ-ում արտադրվող օղի	900005003232
ՀՀ-ում արտադրվող լիկյորներ, մրգօղիներ	900005003240
ՀՀ-ում արտադրվող շամպայն	900005032819
ՀՀ-ում արտադրվող ծխախոտի արդյունաբերական փոխարինիչներ	900005003257
ՀՀ-ում արտադրվող շարժիչային յուղեր	900005032918
ՀՀ-ում արտադրվող այլ ակցիզային ապրանքներ	900005003018
ԵՏՄ անդամ պետություններից ներմուծվող ապրանքներ	900008000490
ԵՏՄ անդամ չհանդիսացող պետություններից ներմուծվող ապրանքներ	ճշտվում է մաքսային մարմնում ապրանքների ներմուծման ժամանակ